15.04.25 - 15.04.25
15:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան (503 ընթերցասրահի մեծ սրահ)

Ս.թ. ապրիլի 15-ին՝ ժամը 15:00-ին, ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի 503 ընթերցասրահում տեղի կունենա «Դասագրքաստեղծում. նոր հնարավորություններ և մարտահրավերներ» խորագրով հանդիպում մայրենիի և գրականության դասագրքերի հեղինակների հետ:

Հանդիպման շրջանակում ելույթով հանդես կգան մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, «Մայրենի 5,6» և «Գրականություն 8» դասագրքերի համահեղինակ, հանրակրթության հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշչի և ծրագրերի վերանայման փորձագիտական խմբի ղեկավար, Շիրակացու ճեմարանի գիտամեթոդական կենտրոնի ղեկավար **Թամար Ալեքսանյանը** և գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 8-րդ և 10- րդ դասարանների «Հայ գրականություն» դասագրքերի համահեղինակ, ԵՊՀ հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչ **Ալբերտ Մակարյանը:**

Քննարկումը կծավալվի հետևյալ հարցերի շուրջ.

- Մեթոդաբանական ի՞նչ նոր մոտեցումներ ու սկզբունքներ են կիրառվել դասագրքերում՝ աշակերտների շրջանում բանավոր և գրավոր խոսքի զարգացման և կատարելագործման համար:

- Որո՞նք են նոր դասագրքերի բովանդակային նորամուծությունները քննադատող, մտածող, ստեղծարար, մոտիվացված աշակերտ ունենալու հարցում:

- Երկչափ կրթությունից անցում է կատարվել եռաչափ կրթության, և սահմանվել են *ընթերցանություն*, *ստեղծարարություն*, *ինքնություն* հիմնական հասկացությունները: Ի՞նչ ազդեցություն է ունեցել այս փոփոխությունը դասագրքերի բովանդակության վրա:

- Սովորողների նախասիրությունները, սոցիալական մեդիան և նոր տեխնոլոգիաներն ի՞նչ ազդեցություն ունեն մայրենիի և գրականության ուսուցման, մասնավորապես դասագրքերի բովանդակության վրա:

- Դասագրքերի նոր ձևաչափ, գունային և այլ լուծումներ (8-րդ դասարանի դասագրքի օրինակով):

- Ո՞րն է դպրոցում գրականության դասավանդման գլխավոր առաջնահերթությունը (գեղագիտական, դաստիարակչական, սոցիալական թե՞ այլ):

- Ինչպե՞ս է որոշվում այս կամ այն հեղինակին դասագրքում «ներառելու» հարցը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am